ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՔՐԻՍՏԻՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Վարդանյան,

Ի պատասխան Ձեր 08.05.2024թ. գրության՝ տեղեկացվում է, որ Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցում առկա թունաքիմիկատների վնասազերծման հարցը գտնվում է տվյալ ոլորտի լիազոր պետական մարմինների՝ ՀՀ ՇՄ նախարարության, ՆԳՆ Փրկարար ծառայության, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում:

«Ժամկետանց պեստիցիդների պաշարների ոչնչացում և կայուն օրգանական աղտոտիչներով (ԿԱՕ) աղտոտված տարածքների աղտազերծում՝ քիմիկատների անվտանգ կառավարման միջոցառումների շրջանակներում» ՄԱԶԾ-ԳԷՀ լիածավալ ծրագրի շրջանակներում 2015-2021թթ. ընթացքում իրականացվել է Նուբարաշենի գերեզմանոցի թափոնի քանակի վերագնահատումը, հաստատվել է առկա թափոնների քանակությունները՝ ըստ վտանգավորության դասերի: Վերը նշված ծրագրի շրջանակներում դիտարկվել է դրանց վնասազերծման հնարավորությունները ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս, սակայն տեխնիկական պատճառներով հնարավոր չի եղել իրականացնել: Ներկայումս քննարկվում է Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցում առկա թունաքիմիկատների վնասազերծումն իրականացնել Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի կողմից իրականացվող «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի տարածքում՝ վնասակար նյութերի չեզոքացման աշխատանքների շրջանակներում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ